

Մշակութային և Հասարակական
Երկշաբաթաթերթ

Հոյս

1200 թուման
Հայաստանում 320 դրամ

ԱՆԻՔ

**80-ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԹԷ՛
ԿՈՒՍԱԿՉԱԿԱՆ ԹԵՐԹ**

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Համայնք**
- 3 **Թունեան դպրոցի նորակառույց աղմկահարույց շէնքը**
Քարմէն Ազարեան
- 5 **Իսրայէլը ընդդէմ հայոց պատրիարքարանի Սիրանոյշ Պապեան**
- 6 **Հայաստան՝ Հաշմանդամութիւն ունեցող մարդիկ ցոյց են անցկացրել**
Սիրանոյշ Գելորգեան
- 13 **Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ծննդեան տարեդարձի առիթով**
Լեւոն Ահարոնեան
- 15 **Թեհրանահայ պատանու յաջողութիւնը «նռան հատիկ» թատերական փառատունում**
- 16 **Նոր Զուլայի թատրոնի 125-ամեակի առթիւ**
Նիկիտ Սիրգայեանց
- 18 **Զագի արքայ՝ Վիգէն Տրստրեան**
Խաչիկ Խաչեր
- 20 **Հարցազրոյց երգչուհի Իւետայի հետ**
Քաթրին Եաղուբի
- 22 **Խոհանոց՝ Արմաի Ռոլէտ**
- 23 **Խորհուրդներ Տնտեսուհուն**
- 24 **Մարզանք**
Արման Տէր Ստեփանեան
- 28 **Ժամանց**

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

Ե սարի, քիւ111, Նոյեմբեր 23, 2011,
1200 քուման
Հայաստանում 320 դրամ



- 8 **«Ալիք»-ը՝ 80 տարեկան**
- 8 **Համայնքային թե՛ կուսակցական թերթ**
Ռոբերթ Սաֆարեան
- 8 **Գիտելիքներ «Ալիք»-ի մասին**
- 12 **«Ալիք»-ը այնպէս ինչպէս ներկայացւած է օրաթերթի կայքում**

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

2	Այս համարի հայերէն էջերում	5	Իրան-Հայաստան յարաբերութիւնների քննարկումը «Կովկասի ուսումնասիրութիւնների կենտրոն»-ում	10	Թուրքաց Խոսրաւի
3	Վիոգրամասնութիւնների դերը հրատարակչութեան եւ գրքի ասպարէզում			12	Կովկասում անկայունութեան գործօնները (ք. մաս)
4	Ռոբերթ Քոչարեանը վերադառնալու՝ է	8	Գարեգին Բ-ի ծննդեան եւ գահակալութեան տարեդարձին նվիրած		Մահմուդ Վաւգի

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատի՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայէլեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմէն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելաբ պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
--	---	---	--



ԿԵԱՆՔԻՆ ՀՐԱԺԵՆՏ ՏԻՇՑՑ ՍԵՊՈՒՅ ԱՄԻՐԽԱՆԵԱՆԸ

Կիրակի Նոյեմբերի 13-ին, իր մահկանացուն կնքեց «Նայիրի» հրատարակչության տնօրեն, ազգային հասարակական գործիչ Սեպուհ Ամիրխանեանը: Սեպուհ Ամիրխանեանը, բուն անունով Սեփանոս Ամիրխանը, ծնվել է Իրանի Կենտրոնական նահանգի Արաք քաղաքում 1940 թվականին: Կրթությունն ստացել է Թեհրանում, որից յետոյ մասնակցել է Թեհրանի առաջնորդարանի չորսամսյա հայերենագիտական դասընթացներին: Այնուհետև մի քանի տարի որպես ուսուցիչ ծառայել է «Թունեան» դպրոցում: Ս.Ամիրխանեանը դեռ երիտասարդ տարիքից հետաքրքրվել է հրատարակչական աշխատանքով, որով էլ Գերմանիա մեկնեց

առաել հմտանալու այդ արհեստում: 1949 թվականին Թեհրանում Սամուել Սարուխանեանի միջոցով հիմնեց «Նայիրի» գրախանութը, իսկ 1959 թ. համանուն հրատարակչություն-տպարանը: 1970 թվականից Սեպուհ Ամիրխանեանը սկսեց համագործակցել Ս. Սարուխանեանի հետ եւ ստանձնեց տպարանի տնօրենի պաշտօնը, իսկ Սարուխանեանի մահից յետոյ, սկսեալ 1986 թվականից դարձաւ նրա միակ սեփականատէրը: 1994 թվականին «Նայիրի» հրատարակչությունը պաշտօնապես գրանցեց եւ սկսեց իր աշխատանքը: «Նայիրի» հրատարակչությունը իր հիմնադրումից իվեր տպագրել

ու հրատարակել է աւելի քան 200 անուն գիրք, իսկ 1954 թվականից կանոնաւոր կերպով՝ «Նայիրի» օրացոյցը: Սեպուհ Ամիրխանեանի կորուստը մեծ է եւ անփոխարինելի, ոչ միայն իր հարազատների ու ընկերների, այլեւ ողջ համայնքի եւ յատկապէս մեր՝ մամուլի ու հրատարակչության բնագաւառում աշխատողներիս համար: Այս կապակցութեամբ, «Յոյս» երկշաբաթաթերթի խմբագրութիւնն ու ողջ անձնակազմը, խորը վշտով համակուած իր ցաւակցութիւնն է յայտնում նրա ընտանիքին, հարազատներին, ընկերներին եւ ողջ համայնքին: Թող, որ հողը թեթել լինի վրան...

ԿՈՐ ՍԵՂԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Չորեքշաբթի Նոյեմբերի 16-ին, «Ալիք» օրաթերթի 80-ամեակի մեծարման յանձնախմբի միջոցով «Հայ Ակումբ»-ում կայացաւ կլոր սեղան՝ նւիրւած հայերէն մամուլին առնչող հարցերին եւ դժարութիւններին: Քննարկումներին մասնակցում էին «Ալիք» օրաթերթի խմբագիր՝ Դերենիկ Մելիքեանը, «Դրօշակ»-ի խմբագիր՝ Կարէն Խանլարեանը, Հայկական ռադիօ-ժամի աշխատակից՝ Ռոբերտ Մարգարեանը, «Հայելի» կայքի վարիչ՝ Սեւան Տէր Պետրոսեանը, ինչպէս



նաեւ «Յոյս» երկշաբաթաթերթի խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեանը: Դատարկ էր «Արաքս» օրաթերթի եւ «Իրանահայեր» կայքի ներկայացուցիչների տեղը, որոնք կարող էին իրենց տարբեր դիտանկիւններով

աւելի ճոխացնել քննարկումները: Մեր յաջորդ համարում աւելի մանրամասն կանդորադառնանք կլոր սեղանի ընթացքում արծարծւած մտքերին ու տեսակէտներին:

«ԹՈՒՆԵԱՆ» ԳՊՐՈՅԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԱՂՄԿԱՅԱՐՈՅՑ ԸՆԵՔԸ

Քարմեն Ազարեան



Երկար չտեսեց «Սասուն» թահամասի ժողովրդի աննկարագրելի ուրախութիւնը՝ «Թուներան» օրը. տարրական դպրոցը նորակառոյց շէնք տեղափոխելու կապակցութեամբ: Իրօք, որ բացման արարողութեանը ներկայ իւրաքանչիւրի սիրտն ու հոգին համակել էր մի մեծ ոգեւորութիւն, ասես թէ դա մի նոր յոյսի դուռ էր բացում արտագաղթի ու այլ պատճառներով յուսալքուած համայնքի համար: Սակայն, դա, ինչպէս ասեց երկար չտեսեց, քանի որ առաջին իսկ թափուղ անձրեւաջրի հետ յօջս ցնդեց: Ջուրը չզփտես որտեղից հասնում էր կախովի ոչ ջրակայուն առաստաղին, որը եւ տեղտեղ թրջուում ու վայր էր ընկնում: Այն լուրը, իբր որի՝ նոր ու զարգացած միջոցներով, շինանիւթերով ու տեխնիկայով կառուցուած շէնքի ինչ-որ մասերը փլուէլ է, ասես ռումբի պէս պայթեց ողջ թահամասում: Բոլորն անխտիր, ասես լսածին չհաւատալով, իրար էին ուղղում միեւնոյն հարցը «Ճի՞շտ է, որ...»: Հարուածը կայծակնային էր, այնուամենայնիւ, այն շատ շուտով հաստատուելով, սովորական դարձաւ: Մի խօսքով փաստի առջեւ կանգ-

նած ժողովուրդը համակերպեց դրա հետ: Միւս կողմից հոսանքն էլ բաւարար չէ, շէնքը բուժէ չունի, գազը դեռ միացուած չէր ...: Բայց դրանցով հարցը չփակեց: Եղանակը ցրտեց եւ բնականաբար հարկ եղաւ ջեռուցումը միացնել, մի բան որ աւելի բարդացրեց իրավիճակը: Այս անգամ խողովակներն սկսեցին ջուր բաց թողնել եւ դարձեալ ջուրը յայտնեց ամենուր եւ առաստաղն սկսեց թափփուել: Իմիջիայլոց այս շուրջ մէկ ամսւայ ընթացքում դպրոցը շարունակ չի աշխատել եւ առաստաղի թափուելու կամ թէ գազը միացնելու եւ այլ պատճառներով պարտադրաբար փակել է եւ երեխաները կանոնաւոր դպրոց չեն յաճախել:

Վերջին այսպէս կոչուած «աւերածութիւնը» տեղի ունեցաւ Նոյեմբերի երկրորդ շաբաթւայ ընթացքում, երբ ջեռուցման համակարգը շահագործման յանձնեց, որի հետեւանքով վերստին փակեցին դպրոցի դռները եւ վիճակից դժգոհ ու մտահոգ ծնողները դպրոց շտապեցին իրավիճակին վերահասու լինելու: Իրադրութեանը մօտից ծանօթանալու եւ թե-

րես խնդիրներին լուծում տալու նպատակով, կիրակի, Նոյեմբերի 13-ի առաւօտեան «Թուներան» դպրոց եկան թեմական խորհրդի ատենապետ պրն. Է. Բաբախանեանը, պրն.Ռ.Սարխոջեանը եւ Կրթական խորհրդի ատենապետ տկն.Ի.Աբնուսեանը: Ստացուած տեղեկութիւնների համաձայն շէնքի կապալառուն այս բոլոր խնդիրների պատճառը շտապողականութիւնն է համարել, որով շէնքը համապատասխան ու պարտադիր փորձնական շրջանը չի անցել: Այս բոլորի արդիւնքում ազգային մարմինների ներկայացուցիչները դպրոցը լքեցին տնօրինութեանը յանձնարարելով, որ ծնողների հետ մի ժողով գումարեն եւ հէնց իրենք որոշեն թէ այս նոր շէնքում մնա՞ն թէ՞ «Նայիրի» դպրոց վերադառնան: Երկու քարի արանքում յայտնուած ծնողները, որոնք մեծ դժարութեամբ ու տքնաջան աշխատանքով դպրոցը հագիւ էին տեղափոխել այդ նոր շէնքը, բնականաբար որոշեցին ետ չգնալ, բայց եւ այսուհետ վերահսկել շինարարութեանը:

Այս միջոցին բազմաթիւ հարցեր մնում են անպատասխան.

- Եթէ նման փորձնական շրջան անցկացնելը պարտադիր էր, ապա ինչո՞ւ դա չարին. ո՞վ էր շտապողը՝ պատասխանատուները թէ՞ քանի տարի համբերութեամբ սպասած ժողովուրդը:

- Ինչո՞ւ են այս դժւարին կա-

ցութեան մէջ ծնողներին մենակ թողնում եւ նրանց են վստահում գնալ-մնալու բարդ որոշումը՝ նրանց վզին փաթաթելով հետագայ պատասխանատուութիւնը: Ինչո՞ւ մասնագէտներ չեն հրաւիրում շէնքի ներկայ վիճակը գնահատելու եւ ըստ այդմ որշում կայացնում: Չէ՞ որ մեր երեխաների անվտանգութեան հարցն է մէջտեղում, եւ ոչ մասնագէտ մարդը չի կարող ասել թէ կարելի է մնալ թէ ոչ, անվտանգ է թէ ոչ:

- Ի վերջոյ, անձրեւն ու ցրտերը մեղաւոր լինել չեն կարող, պէտք է մեղաւորին բացայայտել, ով որ է՝ ճարտարապետը թէ գործադիրն ու կապալառուն, միեւնոյն է պատասխանատուն պէտք է յայտնւի եւ իր թերացման համար ուր որ պէտք է պատասխանատութեան ենթարկւի ու պատժւի:

- Նման երեւոյթի վրայ աչք փակելն ու արդարացման ցանկացած անհիմն փորձ անընդունելի է: Նրանք, ովքեր գտնում են, թէ այս բոլորը «փոքր ու անկարելի» բաներ են, որ սովորաբար բոլոր նոր շէնքերում պատահում են (դեռ հարց է, թէ քանի շէնքում են նման բաների ակնատես եղել), նախ՝ անտեսում են մի կարեւոր փաստ, որ սա դեռ սկիզբն է եւ յայտնի չէ սրանից յետոյ ինչ անակնկալներ են սպասում մեզ, եւ երկրորդ՝ առաւել կարեւորն այն է, որ այդ շէնքում ամէն օր ելումուտ են անելու հարիւրաւոր մանուկներ եւ արդեօք մենք իրաւունք ունենք նրանց կեանքը ռիսկի տակ դնելու:

«ԹՈՒՆԵԱՆ»-Ի ԼՈՒՐԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ԱԼԻՔ»-ՈՒՄ (14 Նոյեմբերի համարի «Դիտանկիւն» սիւնակում)

Սոյն գրութեան հէնց առաջին պարբերութեան մէջ նշում է. «...ու շէնքի կիսաւարտ առաստաղը կաթկթեց ու կախովի առաստաղը **վնասեց որոշներին** ծառայելով որպէս **«փլած պատ»:** **Երեւի նրանց հէնց այդ էր պակաս-**

սում: Աւար էր պէտք...» (Ընդգծումը մերն է) շէնց այսքանը շատ խօսում է թերթի դիրքաւորւած լինելու առումով: Նախ՝ երբ բոլորը տեսել են, թէ ինչպէս է սրահի յատակը լցւել ջրով եւ ամենուր թափփուել են այդ կախովի կոչւած առաստաղները, որոնք սովորաբար պատ ու առաստաղ են ասում, արդէն «վնասեց» ասելը շատ եւ շատ մեղմ է ասած: Գալով «որոշներին» բառին, հարց է առաջանում թէ ովքե՞ր են այդ չարակամ «որոշները», որոնց այդ «փլած պատերն» ու «աւարն» էր պէտք: Այդ մասին անյայտ հեղինակը լռութիւն է պահպանել: Գուցէ՞ նրանք այն բողոքող ու վրդոված ծնողներն են, որ քանի տարի ուշացումով ստացած դպրոցը դեռ չվայելած ստիպւած են ամէն օր իրենց գլխի եկածը լացել: Կամ էլ հնարաւոր է դէսից-դէնից մամուլում կցկտուր տեղեկութիւններ տուողները լինեն, որ չգիտես ինչու ժողովրդին տեղեկացնելով կատարածի մասին նման վրդովմունքի ու ժողովրդական բողոքի պատճառ են եղել: Ո՛վ գիտէ թէ հեղինակը ո՞ւմ է փորձում «քօղազերծել»:

Շարունակութեան մէջ **փլուզում** բառը չակերտների մէջ առնելով հեղինակը հէնց այդքանով փոխանցում է այն գաղափարը, որ դա այն փլուզումը չէ, որ սովորաբար ասում են, եւ այդ կախովի պատերի ընկնելու համար անելի ճիշտ կը լինի օգտագործել «վնասել» բառը:

Յաջորդ չակերտաւոր բառը գալիս է անմիջապէս յետոյ՝ երկուերեք տողից, «Տրամաբանօրէն դժգոհ ծնողները իրենց **«անկեղծ»** բառապաշարով բողոքեցին եւ արդիւնքում դպրոցը մի քանի օրով աշակերտութիւն չընդունեց...» Չգիտես ինչու է հեղինակը դժգոհել, երբ ծնողը իր տրամաբանական բողոքն արտայայտում է անկեղծ՝ առանց անելորդաբանութիւնների ու կեղծ շողոքորթութեան, մի բան, որին կարծես մեր ականջները վարժւած են: Իսկ 80-

ամեայ փորձառութեամբ, համայնքայինի յաւակնութիւն ունեցող թերթը ինչպէ՞ս է արծագանքել այս ողջ անցուդարձը: Արդեօք ժամանակին, երբ անձրեւի այդ չարաբաստիկ «երկարաշունչ կաթկթոցը» աներներ էր գործում ու ջեռուցման ուշացումով հարիւրաւոր աշակերտներ ու ծնողներ խիստ անյարմար դրութեան էին մատնւել, որեւէ լուսանկարով կամ առանց մեկնաբանութեան ու ստոյգ լրատութեամբ փորձել է կանխել այդ «որոշների» իր ասած սուտ լրատութիւնը եւ դրանով իսկ հանգստացնել վրդոված ժողովրդին:

Գրութիւնը նոյն ոգով շարունակում է կանգնելով պատասխանատուների պաշտպանի դերում. «Պատճառների մասին յետոյ կը խօսենք:» Յետաքրքիրն այն է, որ այսքանից յետոյ զուտ լրատական առումով ուշացած տեղեկատուութիւնը դեռ թողնում է ապագային, թէ «յետոյ»-ն ո՞ւմ է պէտք, պարզ չէ: Եւ ի վերջոյ մտքի ընկնում՝ «Ի՞նչ անել կամ ինչպէ՞ս անել, որ այս **իրարայաջորդ իրարարձութիւնները** չյանգեցնեն անվստահութեան ալիքի, երբ գործն արւում է, ծախսերը կան եւ փակւել են դեռ փակւում են, կամքն էլ անպակաս է, սակայն արդիւնքներն էլ, ժամանակն էլ շտապողականութեան իսկական զոհերն են...» (Ընդգծումը մերն է) Յեղինակի այս տողերից կարելի է այնպէս եզրակացնել, որ ամէն ինչ տեղը տեղին արւել է եւ ծախսերն էլ անում են, եւ ժողովուրդը իզուր է մեղադրում եւ պատասխանատուութեան կանչում դեկավարներին. Չէ՞ որ «շտապողականութիւնն» է միայն մեղաւոր: Դեռ մի կողմ թողնենք այն պարագան, որ թերթը իրաւասու չէ ժողովրդի հարստութեամբ կառուցւած շէնքը նրա երեսովը տալ, ազգային իշխանութեան համապատասխան անձինք սեփական գրպանից չէ, որ այդ շէնքը կառուցել են:

ԻՍՐԱՅԷԼԵՆ ԸՆԴՊԷՄ ՀԱՅՈՑ ԴԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Սիրանոյշ Պապեան



Պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ Յովհաննէս Յովհաննիսեանի հետ զրուցել ենք Երուսաղէմի հայոց պատրիարքութեան առաջ ծառայած խնդիրներից:

Իսրայէլական «Հասրեց» պարբերականը օրերս անդրադարձել է Երուսաղէմում քրիստոնեայ հոգեւորականների նկատմամբ ուլտրա-ուղղափառ երիտասարդների կողմից կիրառուող բռնութեանը, մասնաւորապէս՝ ինչպէս են նրանք հայիոյուն եւ թքում քրիստոնեայ հոգեւորականների վրայ: Վերջերս Երուսաղէմի դատարանը չեղեալ է յայտարարել հայ հոգեւորական ուսանողի նկատմամբ կայացրած վճիռը, ով հարւածել էր իր վրայ թողդին:

Այս խնդիրները նոր չեն, շատ վաղուց գոյութիւն ունեցող խնդիրներ են, եւ հիմնականում պայմանաւորւած են ոչ թէ հոգեւոր դաշտով, այլ իրենց հիմքում աւելի շատ նիւթական եւ քաղաքական ենթատեքստ ունեն, քանի որ Հայ եկեղեցին Երուսաղէմում ունի բաւական մեծ ուժ եւ հեղինակութիւն: Բացի այդ, հայերը Երուսաղէմում մի ամբողջ թաղ ունեն, որն այդպէս էլ կոչւում է՝ Հայկական թաղ: Սրա նկատմամբ խանդով են լցւում տեղական իշխանութիւնները, հիմնականում Իսրայէլի իշխանութիւնները եւ մնացած եկեղեցական համայնքները: Շատ դէպքերում այլ եկեղեցական համայնքները, օրինակ՝ ուլտրա յոյն ուղղափառները օգտագործուում են իշխանութիւնների կողմից ընդդէմ հայերի: Յիշում էք մի քանի տարի առաջ ինչպէս բոլոր լրատւամիջոցները ցուցադրեցին Երուսաղէմի Քրիստոսի Յարութեան տաճարի մատոյցներում հայ եւ յոյն հոգեւորականների ձեռնամարտի տեսանիւթը: Կարելի է

ասել, որ այդ կոնֆլիկտները պարտադրւած են մեր հոգեւորականներին Երուսաղէմում, բայց մենք տեսանք խնդրի միայն մի կողմը, երբ ցոյց տւեցին՝ իբր հայ հոգեւորականները կռիւ են սարքում, այն ինչ սա հրահրուում էր տեղի իշխանութիւնների եւ յոյն հոգեւորականների կողմից, որոնք շատ յաճախ գործիք են ծառայում նրանց համար:

Սակայն նշուում է, որ ուլտրա-ուղղափառները այդ կերպ հաւածում են նաեւ յոյն հոգեւորականներին:

Այնտեղ յունական եկեղեցու ներկայացուցչութեան երկու ճիւղ կայ: Մի ճիւղը բաւականին սերտ համագործակցում է տեղի իշխանութիւնների հետ եւ բաւականին մեծ հողեր վաճառեց իշխանութիւններին, ինչը ձեռնառու էր իշխանութիւններին, որից յետոյ յոյն ուղղափառ եկեղեցին առաջնորդին հեռացրեց եւ նշանակեց նոր մարդու, սակայն նախորդը, որը մօտ էր իշխանութիւնների հետ, չհրաժարուեց իր աթոռից, եւ փաստացի այնտեղ հակաթոռ ձեւաւորուեց: Եւ հիմա յոյն ուղղափառ եկեղեցին ներկայացւած է երկու դէմքով՝ մէկին պաշտպանում է յոյն ուղղափառ եկեղեցին, միսին պաշտպանում է իսրայէլական իշխանութիւնը: Եւ շատ յաճախ այս երկութիւնը հիմք է տալիս չհասկանալու խնդրի բուն էութիւնը: Իսրայէլական իշխանութիւնները պաշտպանում են այդ մի թելի ներկայացուցչին, որը յոյն ուղղափառ եկեղեցուն պատկանող հողերի մի ստար զանգւած վաճառեց իսրայէլական կառավարութեանը, իսկ հին քաղաքում մենք գիտենք, որ ամենալուրջ խնդիրը հողային խնդիրն է, եւ հայ եկեղեցու շուրջ ստեղծւած այս թնջուկը հիմնականում վերաբե-

րում է նրան, որ այնտեղ հայերը բաւական լուրջ հողային տարածքներ ունեն, ինչը իշխանութիւնների սրտով չէ: Եւ տարբեր տեսակի միջադէպեր են հրահրում, որպէսզի հեղինակագրկեն հայ եկեղեցուն, որ կարողանան իրենց նպատակին հասնել:

Նման դէպքերում ինչքանով պէտք է լինի Մայր Աթոռի միջամտութիւնը, քանի որ Երուսաղէմի հայոց պատրիարքարանում գողութիւնը, կողոպուտը, թաւանը շարունակւում է, մի քանի տարի առաջ հողեր վաճառեցին իսրայէլական իշխանութիւններին:

Երուսաղէմի պատրիարքութիւնը ինքնանկախ է, եւ ինքնուրոյն է որոշում իր հարցերը: Ուղղակի մեր պետութիւնն էլ իրաւատու չէ խառնելու այս հարցերին: Բայց եթէ քննարկել եւ որոշել, որ խնդիրն այնքան է սրացել, եւ եթէ Երուսաղէմի պատրիարքութիւնն էլ դիմի պետութեանը՝ որեւէ նամակ կամ նոտա ուղարկել եւ միջամտել հարցին, անտեղի չի լինի եւ որեւէ արդիւնք կը տայ, քանի որ ըստ էութեան սա միայն Երուսաղէմի պատրիարքութեան խնդիրը չէ, այլ ողջ հայութեան եւ նաեւ հայոց պետութեան խնդիրն է:

Բայց, կրկնում եմ, Երուսաղեմի պատրիարքարանը պետք է որոշի, թե խնդրին ինչպիսի լուծում պետք է տալ:

Արդեօք պատճառը Թորգոմ պատրիարքի ծեր լինելու եւ իրավիճակին չտիրապետելու մէջ է, իսկ միւս կողմից էլ տեղապահի ընտրութիւնները շարունակ հետաձգուում են:

Ես սա միանշանակ պատրիարքի ծերութեան հետ չէի կապի, որովհետեւ Երուսաղեմի պատրիարքութիւնը շատ աւելի բարդ իրավիճակներ է ունեցել պատմականօրէն եւ այդ վիճակներից դուրս է եկել: Ուղղակի, քանի որ խնդիրը քաղաքական ենթատեքստ ունի, այդ պատճառով էլ հարցին անհրաժեշտ է համակողմանի մօտեցում ցուցաբերել ու չդիտարկել միայն մէկ տեսանկիւնից: Եթէ նախկինում շատ պայմաններ չեն եղել, այսօր դրանք առկայ են, եւ այսօր իսրայէլական իշխանութիւններն են սրում իրավիճակը, սակայն գործում են թաքնուած ու այլոց ձեռքերով: Եւ ես սա որեւէ կերպ չեմ ուզում կապել պատրիարքի ծերութեան կամ անձի հետ:

Lragir.am կայք

ՍՈՒՏՔՆ ԱՐԳԵԼԻԱՏ Է

ՀԱՇՄԱՆՊԱՍՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆՈՂ ՄԱՐԴԻԿ ՉՈՅՉ ԵՆ ԱՆՉԿԱՅՐԵԼ

Սիրանոյշ Գեւորգեան

Հաշմանդամութիւն ունեցող մի խումբ մարդիկ մէկ անգամ եւս իրենց օրինակով հանրութեանը եւ իշխանութիւններին ցոյց տուցին, որ Երեւանում ոչ մի հասարակական տրանսպորտ, շէնք-շինութիւն, այդ թւում՝ պետական կառոյցներ եւ նոյնիսկ փողոցներ, մատչելի չեն մօտ 4000 սայլակով տեղաշարժող հաշմանդամների համար:

Չորեքշաբթի (Նոյ.) կազմակերպած ակցիայի ընթացքում, որը նախաձեռնել էին հաշմանդամների իրաւունքների պաշտպանութեամբ զբաղող մի շարք հասարակական կազմակերպութիւններ եւ Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպանի գրասենեակը, հաշմանդամութիւն ունեցող մարդիկ փորձեցին մետրոյի «Հանրապետութեան հրապարակ» կայարանից հասնել Երեւանի քաղաքապետարան՝ քաղաքապետ Կարէն Կարապետեանին յանձնելու իրենց նամակը: Նամակով նրանք, յղում կատարելով ՄԱԿ-ի Հաշմանդամութիւն ունեցող անձանց իրաւունքների մասին կոնւենցիային (Հայաստանում ուժի մէջ է մտել 2010-ին) եւ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանութեան մասին» օրէնքին, խնդրում են քաղաքապետին հնարաւորինս սեղմ ժամկետում միջոցներ ձեռնարկել հասարակական տրանսպորտը եւ կառոյցների, ճանապարհների, բացօթեայ եւ փակ հաստատութիւնների, այդ թւում դպրոցների, բնակելի տարածքների, բժշկական հաստատութիւնների եւ աշխատավայրերի մուտքը հաշմանդամների համար մատչելի դարձնել: Ակցիային միացել էին նաեւ «Էմփոնէյ» ռոք խմբի անդամները,

նի քաղաքապետարան՝ քաղաքապետ Կարէն Կարապետեանին յանձնելու իրենց նամակը: Նամակով նրանք, յղում կատարելով ՄԱԿ-ի Հաշմանդամութիւն ունեցող անձանց իրաւունքների մասին կոնւենցիային (Հայաստանում ուժի մէջ է մտել 2010-ին) եւ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանութեան մասին» օրէնքին, խնդրում են քաղաքապետին հնարաւորինս սեղմ ժամկետում միջոցներ ձեռնարկել հասարակական տրանսպորտը եւ կառոյցների, ճանապարհների, բացօթեայ եւ փակ հաստատութիւնների, այդ թւում դպրոցների, բնակելի տարածքների, բժշկական հաստատութիւնների եւ աշխատավայրերի մուտքը հաշմանդամների համար մատչելի դարձնել: Ակցիային միացել էին նաեւ «Էմփոնէյ» ռոք խմբի անդամները,





հանդիսավար Եգոր Գլունովը, «Ես» ամսագրի խմբագիր Անի Քոչարը, որն ուղեկցում էր սայլակին նստած իր ամուսնուն: «Այն, ինչ հասանելի է բոլորին, պետք է հասանելի լինի նաև հաշմանդամութիւն ունեցող մարդկանց, իսկ մեզ մօտ կինօթարոնները, մշակոյթի օջախները, պետական հիմնարկների մեծ մասը հաշմանդամների համար չեն, մատչելի տրանսպորտը իսպառ բացակայում է: Այդքան օրէնքներ, շինարարական նորմեր, կառավարութեան որոշումներ ընդունեցին, բայց սայլը տեղից չի շարժում, մեր կեանքում մենք դեռ փոփոխութիւններ չենք զգում: Ինչպէս մեր օգնականներից կախուած էինք, այդպէս էլ կախուած կը մնանք, մինչեւ ռէալ քայլեր չարւեն», - ասաց «Ունիստն» ԶԿ նախագահ Արմէն Ալլավերդեանը, ով եւս սայլակով տեղաշարժող հաշմանդամ է: Ակցիային մասնակցող 34-ամեայ Շուշան Նահապետեանը (22 տարի առաջ պատշգամբի փլչելու հետեւանքով 3-րդ յարկից ընկել է ու հաշմանդամութիւն ձեռք բերել), ով ապրում է Երեւանի ծայրամասերից մէկում, «Արմենիանաուին» ասում է, որ քաղաքում սակաւաթիւ վայրեր կան, որ մատչելի են իր համար եւ յաճախելու դէպքում էլ անպայման օգնականի հետ է գնում: «Եթէ նոյնիսկ մի հաստատութիւնում խնդիր չլինի, ապա դրսում անպայման խոչընդոտների կը հանդիպեն: Յոյս ունեն, որ տրանսպորտի հարցը վերջապէս կը լուծի, չենք յօգնում՝ կրկնե-

լուց, որ բոլորը հաւասար իրաւունքներ ունեն, եւ մատչելի միջավայրը բոլորի համար է», - ասում է Նահապետեանը, ով իր բնակութեան տարածքում առանց օգնականի չի կարող ոչ մի վայր այցելել: Ալլավերդեանն ասում է՝ հասարակական տրանսպորտը հաշմանդամութիւն ունեցող մարդկանց յարմարեցնելը այդքան մեծ գումարներ եւ ժամանակ չի պահանջում, ինչպէս պնդում են իշխանութիւնները: Նա բերեց Լոնդոնի օրինակը, որտեղ 2000 թականին յարմարեցւած տրանսպորտը կազմում էր ընդամենը 5 տոկոս, իսկ 2006-ին օրէնքի կիրառման շնորհիւ վերջին անմատչելի ակտիւսը տեղափոխել է թանգարան: «Կարող էք ասել, որ Մեծ Բրիտանիան հարուստ երկիր է, իսկ Զայաստանը՝ ոչ, բայց եթէ համեմատենք Լոնդոնի եւ ողջ Զայաստանի տրանսպորտային պարկը, դա պարզապէս անհամեմատելի է: Ուրեմն հնարաւոր է անել, պարզապէս պետք է կամք ունենալ եւ կոնկրետ օրէնքներ», - ասում է Ալլավերդեանը: Հաշմանդամութիւն ունեցող մարդկանց՝ մետրոյով երթելեկելու փորձը միանգամից ձախողեց, քանի որ դէպի Երեւանի ամենակենտրոնական կայարան տանող թեքահարթակն այնքան նեղ էր, որ դրա վրայով անհնար էր նոյնիսկ մակասայլակ իջեցնել: Ակցիային միացած օմբոլսման Կարէն Անդրեասեանն ասաց՝ ուզում են միասին փորձել երթելեկել եւ ցոյց տալ, թէ ինչ դժարութիւններ են ունենում հաշմանդամութիւն ունեցող մարդիկ: Նա մատնացոյց արեց վերջին տարիներին Երեւանի կենտրոնական մասերում կառուցւած մեծ բարձրութիւն ունեցող եւ ըստ էութեան ձեւական բնոյթ կրող թեքահարթակները, որոնցով նոյնիսկ առողջ մարդը չի համարձակւի քայլել, քանի որ կարող է գլորել: Անդրեասեանն ուղեկցում էր սայլակաւոր հաշ-

մանդամի եւ հրապարակին կից կանգառում փորձեց նրան երեք այլ տղամարդկանց հետ բարձրացնել «Բոգդան» ակտիւսը: Այս փորձը եւս անյաջողութեան մատնեց, քանի որ ակտիւսի դուռը շատ նեղ էր, իսկ ներսում սայլակը կանգնեցնելու տեղ պարզապէս չկար: Հաշմանդամութիւն ունեցող մարդիկ փորձեցին նաև մտնել գլխաւոր դատախազութեան շէնք, սակայն դա եւս անհնար էր, քանի որ մուտքի մօտ թեքահարթակ չկար: Փոխարէնը թեքահարթակ կար Երեւանի քաղաքապետարանի քաղաքացիների ընդունելութեան դռան մօտ, բայց ակցիայի մասնակիցներին ներս չհրաւիրեցին: Դուրս եկաւ քաղաքապետարանի տրանսպորտի վարչութեան պետ Յենրիկ Նաւասարդեանը, ով ասաց, որ Դեկտեմբերի կէսին Երեւան ներկրելիք 66 ակտիւսները եւս յարմարեցւած չեն հաշմանդամների համար: Նա խոստացաւ, որ յաջորդ տարի բերելուց յետոյ դրանք քաղաքապետարանի միջոցներով կը յարմարեցնեն: Նաւասարդեանն ասաց՝ այժմ Երեւանում յարմարեցւած երկու տրոլէյբուս կայ: «Ունիստն» ԶԿ նախագահն այնքան էլ վստահ չէ, որ ներկրւած ակտիւսները մատչելի կը դառնան իրենց համար: «Քաղաքապետարանի պատասխանը մեզ համար նորութիւն չէր: Գիշտ հասկանանք՝ բերելու են սովորական ակտիւսներ, բայց յոյս ունենք, որ դրանցից մի փոքր մասը կը յարմարեցնեն, իսկ որպէսզի յարմարեցումը չկրի ձեւական բնոյթ եւ իրօք կիրառելի դառնայ, պետք է ակտիւսին մասնակցենք այդ գործընթացին», - ասաց նա:

Աղբիւր՝ www.armenianow.com

«ԱԼԻՔ»-Ը՝ 80-ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

Ռոբերթ Սաֆարեան

ԿՈՒՄԱՍ

Տօնական առիթ է, «Ալիք»-ի 80-րդ տարեդարձը, եւ չգիտես ինչ գրել, որ թէ համապատասխանի տօնական տրամադրութեանը եւ միաժամանակ, կոպիտ ասած, չդաւաճանես ճշմարտութեանը, կամ առնուազն ինքդ քեզ եւ այն տեսակետներին, որ ունես օրայ «հերոսի» մասին: Տօնական առիթները, թէեւ հարկաւոր են մարդկանց եւ հաստատութիւնների ձեռքբերումներն ու արժանիքները զնահատելու համար, սակայն ունեն գովասանքների վերածելու պոտենցիալը, ինչը դէմ է այն քննադատական ոգուն, որն սպասուում է մամուլից: Անձամբ հասել եմ այն համոզման, որ տւեալ անձի, հաստատութեան, հրատարակութեան կամ արւեստի գործի մեծարումը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ նրա քննադատումը: Այսպիսի քննադատութիւնն նաեւ առիթ կարող է հանդիսանալ քննադատողի համար՝ վերանայելու իր անցեալի կեցածքը այդ երեւոյթի կամ գործի նկատմամբ:

Վերադառնանք «Ալիք»-ին: «Ալիք»-ի մեղքերի կամ մեղադրանքների ցուցակը նրա հակառակորդների մօտ բաւական երկար է, իսկ նրա եւ նրա համախոհների մօտ, «Ալիք»-ը լիովին զերծ է որեւէ մեղքից: «Ալիք»-ի մօտ բացարձակապէս բացակայում է ինք-

նաքննադատութիւնը: Նա 80 տարի շարունակ միայն ծառայել է ժողովրդին, ազգի վսեմ գաղափարներին, բոլոր իրանահայ ընտանիքները ամէն երեկոյ անհամբեր սպասում են իրենց սիրելի օրաթերթին, եւ այսպէս: Սա միաժամանակ նշանակում է, որ դրա հակառակորդները մի խումբ անհանգիստ անձինք կամ խմբեր են, որ լաւագոյն պարագային, չեն հասկանում իրականութիւնը, իսկ վատագոյն դէպ-

քում, ծառայում են ազգի թշնամիներին: Այս սուր հակասութիւնը, ինքինին վկայում է համայնքի պառակտւածութեանը, որ իհարկէ այս գրութեան նիւթը չէ:

«Ալիք»-ի ամենամեծ, մայր մեղադրանքը նրա անհանդուրժողականութիւնն է: Օրինակները չեն պակասում, «Յոյս»-ի հրատարակման քանի տարիներում մի քանի դէպքերում անդրադարձել ենք դրանց: Սակայն այդ հանդուրժողականութիւնը պիտի հաս-



Ալիքի հիմնադիրները՝ աջից ձախ՝ Յովսէփ Թադէոսեան (խմբագիր), Վարդան Յովհաննիսեան (արտօնատէր), Յարութիւն Ստեփանեան, Եղիշէ Իշխանեան, Ստեփան Խանրաբեան, Համբարձում Գրիգորեան

ԵՐԹԵՆԻ ԿՅՈՒՄԱԿԱՆ ԹԵՐԻԹ

ԱԼԻՔ

կանալ աւելի ընդհանուր ենթատեսակով: Նախ, «Ալիք»-ը չի կարելի բաժանել Դաշնակցութիւնից, որն իրեն մինչ օրս որակում է «Յեղափոխական» կուսակցութիւն եւ գիտենք, որ յեղափոխական հոգեբանութիւնն ու միջոցները այնքան էլ չեն համընկնում ժողովրդավարական սկզբունքների հետ, որոնցից կարելի էր պահանջել քննադատութիւնը հանդուրժելու սկզբունքն է: Յեղափոխական մօտեցման մէջ, նախ որոշուում է մի թշնամի (օրինակ՝ Սովետական միութիւն կամ Թուրքիա), յետոյ այդ

թշնամու դէմ պայքարելու մի ռազմավարութիւն, իսկ այնուհետեւ, որեւէ քննադատութիւն այդ ռազմավարութեան դէմ որակաւորում է որպէս թշնամու հետ համագործակցութիւն: Ահա «եթէ ինձ հետ չես, թշնամիս ես» սկզբունքը: «Ալիք»-ը այսպիսի յեղափոխական կուսակցութեան պաշտօնաթերթն է եղել եւ նրանից չպիտի սպասել լիբերալ ազատական արժեքներին եւ սկզբունքներին հաւատարիմ մամուլի վերաբերմունք: Հանդուրժողականութիւն, բազմակարծութիւն, երկխօսու-

թիւն եւ նման սկզբունքներ վերջին երկու տասնամեակներում շրջանառութեան մէջ մտած եզրեր են: Անաչառ լինելու համար, պիտի ասենք, որ «Ալիք»-ի հակառակորդներն էլ, որոնց կարելի է ընդհանուր առմամբ որպէս «ծախ» բնութագրել, հանդուրժողականութեան մարմնացումը չեն եղել: Նրանք էլ մի օտար տեսակի յեղափոխականներ են եղել, եւ նոյնքան անհանդուրժողականութիւն են ցուցաբերել, որքան Դաշնակցութիւնն ու «Ալիք»-ը: (Սա իհարկէ սկզբունքային եւ տեսական



առուճով: Պատմականորեն, ում մեղքն ինչքան է, ով ու՛մ հետ է համագործակցել, ով ու՛մ է մատուցել, եւ նման հարցեր առանձին յուշածների միւթ կարող են լինել): Սակայն մի բան պարզ է, վերջին տասնամեակներում «Ալիք»-ը լինելով համայնքի միակ օրաթերթը մեծ պատասխանատուութիւն է կրում անհանդուրժողականութեան գոյատււման համար:

Այժմ թոյլ տւելք անցնենք մի շատ աւելի մանրամասն հարցի, որը սակայն սերտ կապի մէջ է վերջին նշւած հիմնական հարցի հետ. այն է «Ալիք»-ի գրելաճը, որի երկու հիմնական յատկութիւններն են.

Առաջին՝ ածականների շրայլ գործածութիւն. բոլոր նպատակները վսեմ ու վեհ են, բոլոր ազգային գործիչները նւիրեալ եւ ազնիւ, բոլոր գաղափարները սուրբ. հիմա արի ու քննադատի այդ վեհերին, ազնիւներին ու սուրբերին: Երեւի այս ածականների թիւը տաս-քսանից չի անց-

Ալիքի առաջին համարը՝ տպագրւած 1931թ. Մարտի 22-ին Թեհրանում որպէս շաբաթաթերթ, 4 էջ:

Վարդապետներ «Ալիք»-ի մասին

- Ալիքի առաջին համարը՝**
- 1931, Մարտի 22 (4 էջ)
- Պարբերականութիւն՝**
- 1931-1934 ՝ շաբաթաթերթ (175 համար)
- 1935-1940՝ երկօրեայ թերթ (875 համար)
- 1941-1960՝ Առաւօտեան օրաթերթ
- 1960-2011՝ Երեկոյեան օրաթերթ

- թերթ**
- հմբադիրներ**
- 1931-1935 ՝ Յովսէփ Թադէւոսեան
- 1936-1937՝ Երւանդ Ջայրապետեան
- 1937-1941՝ Անդրէ Տեր-Օհանեան (Ամուրեան)

- 1941-1942՝ Մանուէլ Մարութեան (մի քանի ամիս)
- 1942-1948՝ Յովսէփ Յովհաննիսեան
- 1949-1955՝ Տաճատ Պողոսեան
- 1955-1958՝ Յովսէփ Յովհաննիսեան



նում, բայց դրանք կրկնում ու կրկնում են, եւ ստեղծում են մի հոգեբանական ճնշման մթնոլորտ, որը դժարացնում է խօսել թերութիւնների դէմ, դժարացնում է քննադատել եւ հեշտացնում է քննադատողին տեղը նստեցնել:

Երկրորդը՝ ոճային իւրայատկութիւնը ընդհանուր խօսելն է: Զանազան ձեռնարկների հաղորդագրութիւնները կարելի է մէկը միւսի տեղ տպագրել միայն անունները փոխելով: Միշտ «հոծ բազմութիւն», միշտ «գեղարուեստական կատարումներ» եւ ... ինչ պակասում է կոնկրետ նկարագրութիւնն է, որը կարող է հաղորդագրութիւնը դարձնել կենդանի եւ իւրայատուկ: Բայց այդ կոնկրետը յաճախ համարում է անպարկեշտ, աննակարգակ: Իսկ սա ճիշտ այն բանն է, որ լրագրական կենդանի գրութիւնը դարձնում է քիչէներով լի անհետաքրքիր շարադրութիւն: Յաճախ կարդում ենք թէ ներկաները հարցեր տւին, ազգի ջոջերը նրանց պատասխանեցին եւ ... թէ ի՞նչ էին հարցերը, որո՞նք էին պատասխանները, ի՞նչ էր բովանդակութիւնը, այսպիսի հաղորդագրութիւններում բացակայում է:

«Ալիք»-ի թերութիւնների մի մասը, իհարկէ, իրանահայ մամուլի

հրատարակման ընդհանուր դժարութիւնների արդիւնքն են: Հայերէն լեզւի ընդհանուր ցածր մակարդակը, որը մամուլի համար նշանակում է ընթերցողի եւ գրողի պակաս, հանդուրժողականութեան պակասը իրանական հասարակութեան մէջ ընդհանրապէս, նիւթական դժարութիւններ, իրանահայութեան ուսման ոչ բարձր մակարդակը եւ արտագաղթը, բոլորն էլ դժարացնում են որակեալ հայերէն թերթ հրատարակելու գործը:

Արդեօ՞ք դրական փոփոխութիւններ վերջին տարիներին եղել են: Կարծում են այո, բայց դրանք շատ սահմանափակ բնոյթ են ունեցել: Հէնց 80-ամեակին հնչող ճառերում յաճախ լսում ենք, որ «Ալիք»-ը փորձել է եւ փորձում է լինել ոչ միայն կուսակցական թերթ: Լաւ, ի՞նչ է նշանակում համայնքային մամուլ: Համայնքային այսինքն՝ պատասխանել ժողովրդի լրատւական կարիքներին՝ հաւատարիմ մնալով լրատւական սկզբունքներին, արտացոլելով բոլոր կարեւոր լուրերը, անկախ նրանից, որ հաւանում ես այն թէ՛ ոչ: Սակայն վիճակը դեռ այսպիսին է, որ գողանում են Ս. Ամենափրկիչ վանքի մանրանկարչութիւնները եւ «Ալիք»-ը միայն տպագրում է

Առաջնորդաբանի պաշտօնական հաղորդագրութիւնը: Կամ Հայաստանում տեղի են ունենում մեծ մասշտաբի նստացոյցեր ՀԱԿ-ի ղեկավարութեամբ, «Ալիք»-ում համարեա ոչինչ դրանց մասին: Մի նորմալ (այսինքն ոչ-կուսակցական) օրաթերթ չի կարող աչք փակել այդպիսի լուրերի վրայ: «Ալիք»-ը համայնքային չէ նաեւ այն առումով, որ չի կարող արտացոլել համայնքում առկայ բոլոր մտածելակերպերը: Թերթի մահազդերի եւ գովազդերի բաժինը հաւանաբար այն բաժիններն են որ մի կերպ ծառայում են համայնքի ընդհանուր կարիքներին, բայց դա դեռ շատ քիչ է համայնքային թերթ դառնալու համար:



- 1958-1960՝ Անուշաւան Գրիգորեան (խմբագրութեան պատասխանատու)
- 1960-1971 ՝ Դոկտ. Բաղդիկ Մինասեան
- 1971-74՝ Օշին Սուրենեան, Արսէն Մամեան, Խաժակ Տէր Գրիգորեան, Տաճատ Պողոսեան (խմբագրութեան պատասխանատուներ)
- 1974-1976՝ Անդրէ Տէր-Օհանեան

(Ամուրեան)

- 1976-1978՝ Նորայր Պահլաւունի
-  1978-1980՝ Հրայր Խալաթեան
- 1980-1983՝ Էդարդ Երիցեան (տնօրէն-խմբագիր)
- 1983-1984՝ Էդարդ Ղահրամանեան (տնօրէն-խմբագիր)

- 1984-1993՝ Նորայր Էլսայեան
- 1993-1994՝ Խմբագրական խորհուրդ
- 1994-2003՝ Սեդա Դաւթեան
- 2004- — ՝ Դերենիկ Մելիքեան
- Պատասխանատու տնօրէններ՝
-  1931-1951՝ Դոկտ. Վարդան Յովհաննիսեան

«Ալիք»-ը այնպես ինչպես ներկայացված է օրաթերթի կայքում

«Ալիք»-ը հրատարակվում է 1931թ. Մարտի 22-ից թեհրանում, սկզբում որպես շաբաթաթերթ, 1935 թ.-ից երկօրեայ, իսկ 1941 թ.-ից օրաթերթ, 1965 թ.-ից էլ լոյս է տեսնում 8 էջով: Հրատարակել է առանց դադարի, միայն 1979 թ. Յունևարին Իրանի յեղափոխութեան յաղթանակի նախօրեակին մասնակցելով համահրանական մամուլի գործադուլին՝ շուրջ 40 օր դադարել է հրատարակելուց: Ունի Հ.Յ.Ռ.-ի գաղափարա-քաղաքական ուղղվածութիւն եւ իր բովանդակութեան առանցքն է կազմում Հայ Դատի հետապնդումը: Հայ ժողովրդի բովանդակ շահերի պաշտպանութիւնը, իրանահայ համայնքի հայեցի դիմագծի պահպանումը, զանգւածների քաղաքականացումը եւ Իրանի բարգաւաճմանն ու վերելքին նպաստելը իր հնարաւորութիւնների սահմաններում են: Նախապէս ունեցել է շեշտուած հակախորհրդային դիրքորոշում՝ ի նպաստ հայ ժողովրդի անկախութեան վերականգնման: Հայաստանի անկախացումից յետոյ պաշտպանել է օրաւոր զար-

գացող Իրան-Հայաստան կապերի ամրապնդումը՝ ամրագրուած փոխադարձ շահերի հիման վրայ: «Ալիք»-ի արտօնատէրերն են եղել՝ դոկտ.Վարդան Յովհաննիսեանը, դոկտ.Արտաշէս Բաբալեանը, դոկտ.Ռոստոմ Ստեփանեանը եւ ճարտ.Ալբերտ Աճեմեանը: Իսկ տարբեր տարիների խմբագիրներից պիտի նշել՝ Յովսէփ Թադէոսեանին, Երւանդ Հայրապետեանին, Անդրէ Տէր-Օհանեանին, Յովսէփ Յովհաննիսեանին, Տաճատ Պօղոսեանին, դոկտ. Բաղդիկ Մինասեանին, Արսէն Մամեանին (խմբ. պատասխանատու), Հրայր Խալաթեանին, Էդւարդ Երիցեանին, Էդւարդ Ղահրամանեանին, Նորայր Էլսայեանին եւ Սեղա Դաւթեանին: Ներկայիս, 2004 թ. Մարտից, օրաթերթը խմբագրում է Դերենիկ Մելիքեանը: 1961-63 թթ. հրատարակել է «Ալիք» ամսագիրը, իսկ 1969-78 թթ.՝ «Ալիք պատանեկան» երկշաբաթաթերթը: Ունեցել է «Շարժում», «Հայ երիտասարդ», «Ուսանողական էջ», «Գրական», «Էջ 404» յաւելւածներ:

Ներկայիս ունի երիտասարդական «Խաչմերուկ» եւ «Մանկական էջ» յաւելւածները: Ունի իր սեփական տպարանը եւ խմբագրատան շէնքը: Հրատարակել է իրանահայ դպրոցների դասագրքեր, հայերէն ու պարսկերէն գրքեր եւ տպագրական այլազան պատւերներ: Բազմիցս մասնակցել է Իրանի մամուլի ցուցահանդեսներին: «Ալիք»-ի խմբագրատունը 1998 թւականին, փոխադրեց իր նոր շէնքը, իսկ տպարանը 2006 թւականին փոխադրեց այդ նոյն շէնքը: Ներկայիս տպագրում է 4350 տպաքանակով, ունի բաժանորդներ՝ Իրանի հայահոծ քաղաքներում եւ Սփիւռքի զանազան գաղթօջախներում: 2001 թ. Յունևարի 23-ից «Ալիք»-ը տրւում է ինտերնետի (համացանց) վրայ: 2007 թւականին լոյս տեսաւ «Ալիք»-ի հիմնադրման 75-ամեակի առթիւ պատրաստուած գիրքը:

1951-1960՝ Արտաշէս Բաբալեան
1960-1980՝ Դոկտ. Ռոստոմ Ստեփանեան
1980- —՝ Ալբերտ Աճեմեան
Դադարներ՝
 Երկու անգամ դադարել է «Ալիք»-ի կանոնաւար հրատարակութիւնը, երկու անգամն էլ երկրի ընդհանուր քաղաքական պայմանների բերումով
 1942 Դեկտեմբեր - 1943 Մարտ՝

երկրորդ աշխարհամարտի օրերին երկրում տիրող անորոշ դրութեան պատճառով
 1978 Նոյեմբեր - 1979 Յունևար՝ իրանական մամուլի 62-օրեան գործադուլին մասնակցութեան պատճառով
Յաւելւածներ եւ կից հրատարակութիւններ
 «Ալիք Ամսագիր» (1961-63), խմբագիր՝ Նորայր Պահլաւունի
 «Ալիք Պատանեկան» երկշաբա-

թաթերթ (1969-1978), խմբագիրներ՝ Ժիրայր Ղարիբեան, Սայեսա Բաբունեան, Միշա Հայրապետեան
 «Էջ 404» գրական յաւելւած (1989-2003), յետոյ առանձին պարբերաթերթ Վահէ Արմէնի խմբագրութեամբ
 «Խաչմերուկ» երիտասարդական յաւելւած (1994- —)

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՆԴԵԱՆ ՏԱՐԵՂԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Լեւոն Ահարոնեան



Սեպտեմբերի 20, 2011 թ., էջմիածնի վեհարանից ուղարկված մի հեռապատճեն ստացայ, որը հրաւեր էր մասնակից լինելու Նոյեմբերի 4-ից տեղի ունենալիք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդեան 60-րդ տարեդարձին եւ գահակալութեան 12-ամեակին նւիրած արարողութիւններին, որոնք տեղի ունեցան հետեւեալ օրակարգով.

Նոյեմբերի 4, ուրբաթ
Ժամը 12:00 - ին Հայրապետական մաղթանք Սուրբ Էջմիածին մայր տաճարում:

Յետարարողութիւն. Հիւրասիրութիւն Ալեք եւ Մարի Մանուկեան գանձատանը:

Ժամը 19:00-ին հանդիսաւոր նիստ եւ յօբելեանական համերգ Ազգային օպերայի դահլիճում:

Նոյեմբերի 5, շաբաթ

Առաւօտեան Մայր Աթոռի նորակառոյց շէնքերի բացման արարողութիւն:

Երեկոյեան պաշտօնական ճաշ եւ գեղարւեստական յայտագիր:

Նոյեմբերի 6, կիրակի
Ժամը 11-ին Հայրապետական Սուրբ պատարագ եւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն:

Ինչպէս երեւում է յայտագրից, այն բաւականին ճոխ եւ բովանդակալից էր: Այդ կարգի ծրագրերի կատարումն ու կազմակերպումը կարիք ունի հմուտ կազմակերպիչների աշխատանքի, ինչը եւ արւել էր պատշաճ կերպով, որին ականատես եղայ: Այդ մեծ ու ճոխ ծրագրի կատարումը ամբողջ Սուրբ Էջմիածնինն էր, հոգեւորական դասինը, որոնցից իւրաքանչիւրը իր պարտականութիւնն էր

կատարում՝ սկսեալ գեղեցիկ միատեսակ հագուստներով ու փայլուն դէմքերով երիտասարդ արեղաներից մինչեւ աւելի բարձր հոգեւոր դասի սարկաւազներն ու վարդապետերը, տասնեակ եպիսկոպոսները, բոլորը անընդհատ շարժման մէջ էին եւ նրանցից ամէն մէկն իր պարտականութիւնն էր կատարում հանդիսաւոր արարողութեան ընթացքում:

Ծրագրի առաջին բաժինը, որը Հայրապետական մաղթանքի արարողութիւնն էր, կատարւեց արքեպիսկոպոսների եւ եպիսկոպոսների միջոցով: Արարողութեանը ներկայ էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանն իր տիկնոջ՝ Ռիտա Սարգսեանի հետ, ՀՀ վարչապետն իր տիկնոջ հետ եւ մեծ թւով նախարարներ:

Բազմիցս ներկայ եմ եղել Սուրբ Էջմիածնում կատարուող կրօնական ծիսակատարութիւնների, բայց ոչ մի անգամ ժողովրդի բազմութիւնն այդքան չէր եղել: Հրաւիրւած էին հարիւրաւոր հայեր՝ Աւստրալիայից մինչեւ Կանադա, բոլոր հայաշատ երկրներից... Նրանց ներկայութիւնը Սուրբ Էջմիածնի ընտանիքի մեծութեան ու հզօրութեան թարգմանն էր հանդիսանում:

Բոլոր ծրագրերը, որ կատարւեցին, անթերի էին ու մտածած: Հայրապետական մաղթանքի ըն-

թացքում ստացած տարբեր ուղերձներ էին հնչում, որոնցից մեկը, Կիլիկիայի Արամ Առաջին կաթողիկոսի ուղերձն էր, որը հնչեց հանդիսություններին ներկայ գտնուող արքեպիսկոպոս Սեպուհ Սարգսեանի կողմից: Արարողութեան աւարտին, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը արտայայտեց իր գահակալութեան 12 տարիների ընթացքում կատարած աշխատանքների մասին, որոնք եկեղեցաշէն ու հոգեւոր ասպարէզի զարգացմանն ուղղւած գործեր էին:

Ծրագրի երկրորդ մասում հոգեւորականների թափօրն անցաւ դէպի վեհարան ու թանգարանի դահլիճը, որտեղ յատուկ ընդունելութիւն էր նախատեսուել: Վեհափառ Հայրապետը, ՀՀ նախագահն ու իր տիկինը միատեղ կանգնեցին եւ բոլոր ներկաները շարքով մօտենում էին նրանց եւ շնորհաւորում օրւայ կապակցութեամբ:

Ես՝ այդ հանդիսութեանը ներկայ գտնուող հրաւիրեալս, Սեպտեմբերի 20-ին հրաւերն ստանալուց յետոյ, իրանահայ յայտնի քանդակագործ Գառնիկ Պօղոսեանին պատւիրեցի փորագրել Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի արծաթակուռ դիմանկարը, որը շատ յաջող արւեստի գործ ստացւեց: Այդ հանդիսութեան ընթացքում ես այն յանձնեցի Վեհափառին՝ ՀՀ բարձրաստիճան պաշտօնեաների ներկայութեամբ:

Օրւայ խորհուրդն աւելի նշանակալից էր նրանով, որ այդ օրը միասնական էին հայոց իշխանութիւնը, եկեղեցին ու ժողովուրդը, որն էլ հպարտութեան հաճելի զգացում էր պատճառում:

Նոյն օրը, երեկոյեան Ազգային օպերայի եւ բալետի դահլիճում տեղի ունեցաւ յրբեւեանական համերգ, որն անցաւ առանց խճողումի: Ամէն մի հրաւիրեալի աթոռի վրայ դրւած էր նրա համարն ու

կարճ ժամանակում բոլորն իրենց տեղերն զբաղեցրեցին: Հետաքրքիրն այն էր, որ Վեհափառը, ՀՀ նախագահն ու իր տիկինը, ինչպէս նաեւ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամեանն ու էլի մի քանի բարձրաստիճան դեկավարներ նստեցին ժողովրդի մէջ 9-րդ շարքում, ոչ թէ առաջին շարքերում: Դա իմ պատկերացումից դուրս էր թէ՛ նրանց ապահովութեան ու անվտանգութեան առումով եւ թէ՛ համեստութեան իմաստով:

Երգչախմբի կազմը, որ 41 օրիորդներ ու տիկնայք էին, 30 տղամարդիկ, որոնց տեսքը եւ ելոյթը առաւել ճոխութիւն էր տալիս այդ շքեղ բեմին, ուր այդ երեկոյ տարբեր երգիչներ ու երաժիշտներ

ելոյթներ ունեցան: Այնուհետեւ բեմ բարձրացաւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանն ու օրւայ առիթով իր խօսքն ասաց, այնուհետեւ ելոյթ ունեցաւ Արցախի նախագահ Բակօ Սահակեանը, եւ իր մաղթանքի խօսքը յայտնեց Վեհափառ Հայրապետը:

Շաբաթ երեկոյեան, որ հիւրասիրութեան օրն էր, 400 հրաւիրեալներից իւրաքանչիւրին, ներս մտնելիս իր սեղանի ցուցաբարտն էին տալիս:

Այդ գիշեր ընտանեկան ճոխ հիւրասիրութեան պէս մտերմիկ մի ճաշկերոյթ էր կազմակերպւած, որտեղ մաղթանքներ ու ճառախօսութիւններ էին հնչում:

Կիրակի, Նոյեմբերի 6-ին կատարւեց Սուրբ Պատարագ, այնու-



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի արծաթակուռ դիմանկարը պատրաստուեց իրանահայ քանդակագործ Գառնիկ Պօղոսեանի միջոցով, Պրն. Լեւոն Ահարոնեանի պատուերով եւ նւիրեց Վեհափառին՝ նրա ծննդեան տօնի առթիւ:

հետեւ տեղի ունեցաւ եպիսկոպոսների ձեռնադրման կարգը:

Ընդհանրապէս, նման հանդիսաւոր արարողութիւններն ու տօնակատարութիւնները միայն ինչ-որ առիթի նշմանը չեն ծառայում: Այս հանդիսաւոր արարողութիւնները Հայաստանի կրօնի զարգացման ուժն են խորհրդանշում, փաստում երկրի իշխանութեան ու ժողովրդի յարգանքը եւ հաւատքը՝ կրօնի հանդէպ: Այս տօնակատարութիւնը թարգմանն էր Հայաստանի անկախութեան ու ազատութեան եւ խօսում էր այն մասին, որ երբ հայը ազատ եւ ինքնուրոյն է՝ նա իր ստեղծարար միտքը լաւագոյնս է կարողանում օգտագործել:

Այս ամէնի մէջ պէտք է արժանի կերպով գնահատել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի կատարած հսկայական շինարարական գործունէութիւնը, որը բաւականին փոփոխել ու հարստացրել է Սուրբ Էջմիածնի հոգեւոր համալիրի արտաքին տեսքը: Սա անշուշտ, իւրաքանչիւր հայի համար, ով պատկանում է քրիստոնէական վեհ կրօնի դաւանանքին՝ իր հոգեւոր կենտրոնի հզօրութեամբ հպարտանալու մի առիթ է, այն նաեւ այլ ժողովուրդների մօտ մեր հանդէպ յարգանքի ու պատւի զգացումի նոր որակ է ստեղծում:

Հպարտութեան այդ զգացումով է, որ մաղթում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որ Աստուծոյ օգնութեամբ երկար տարիներ շարունակի իր սուրբ գործը, որն ի բարօրութիւն Առաքելական հաւատքին է, Հայաստանի ու հայ ժողովրդի հոգեւոր հզօրութեան ու անրութեան:

ԹԵՂՐԱՆԱԿԱՅ ԴԱՏԱՆՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ **«ՆՈՒՆ ՀԱՏԻԿ»** **ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ**



Հոկտեմբերի 24-29-ին, Երեւանում կայացաւ «Նոան հատիկ» մանկապատանեկան թատերական 11-րդ փառատօնը: Այս տարի մրցանակ չահեց թեհրանահայ Ադէ Բեգիջանեանը: Նա փառատօնին մասնակցել էր ՇԵԼ Սիլվերստայնի «Նոր ծմեռ պապ» մոնոմերկայացմամբ, որը բեմադրւեց «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում եւ արժանացաւ հանդիսատեսների բուռն ծափահարութեան: Ադէն սովորում է Թեհրանի Շանթ դպրոցում եւ առաջին անգամն էր մասնակցում նման փառատօնի:



ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԹԱՏՐՈՆԻ 125- ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ (1887-2012)

Նոր Զուղայի Թատրոնի սկզբնաւորումը եղել է 1887թ. Փետրուար 9-ին, Իսկ Ռաշտինը՝ 1884թ. Յունւարի 28-ին

Նիկիտ Միրզայեանց

«Նոր Զուղայի Թատրոնի պատմութիւնը» գիրքը, պատկանում է պրն. Յ.Գ.Մինասեանի գրչին(1):

Ուսումնասիրելով սոյն գիրքը նկատուում է որոշ բացթողումներ եւ նոյնիսկ զեղչեր, երեւի թէ հեղինակի հնարաւորութիւնները եղել են սահմանափակ, որ չի կարողացել համապարփակ ձեւով ընդգրկել բոլոր մանրամասնութիւնները, եւ գուցէ էլ Սուրբ Ամենափրկիչ Վանքի արխիւային անմխիթար եւ ոչ բարւօք վիճակն է, որ հեղինակին զրկել է կատարեալ աշխատանքից:

Ինչեւիցէ կարիք կայ արխիւների բարեկարգման լուրջ ծրագիր, եւ յուսանք ազգային իշխանութիւնը իր նպաստը կը բերի այս յոյժ կարեւոր գործին, որ մենք կարողանանք անաչառ կերպով հետազօտել մեր համայնքի անցեալը եւ մատուցել դրանք մեր ապագայ սերունդին, որպէս պատմութեան դասեր:

Առայժմ մենք ձեռքի տակ ունենք 3 վաւերագրական փաստաթղթեր, առաջինը իրենից ներկայացնում է Ռաշտ(2)քաղաքի հայկական Թատրոնի հիմնադրումը եւ կազմաւորումը (պիեսները՝ «Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք» եւ « Եչոյի Թուզը»), իսկ երկրորդը՝ Ն. Զուղայի(3) առաջին Թատրոնի բեմադրութիւնը (« Եչոյի Թուզը» եւ «Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք»), եւ վերջապէս երրորդը՝ Ն.Զուղայի արդէն տպագիր առաջին յայտագիրը դե-

րակատարների ճշգրիտ անւանացանկով («Տաճկական խոստմունք» եւ «Շտապ տագնապի»):

Նոր-Զուղայի Թատրոնի պատմութեան գրքի 17-րդ էջում կարդում ենք. «Այսպիսով հաստատուում է, որ Ն.Զուղայի Թատրոնը հակառակ սկզբնական օրերի հասկացողութեան, ոչ թէ հիմնւել ու սկսել է 1888 թւին, այլ 1886 թւին, այսինքն՝ երկու տարի աւելի շուտ, քան այն ինչ գրւել էր: Թէեւ այս մասին դժբախտաբար այլ մանրամասնութիւն չկայ, իսկ Տիգրան Արզարեանն եւս չի նշել իր ձեռք բերած աղբիւրը, բայց այդուհանդերձ վստահելի է իր խօսքը եւ որեւէ կասկածի տեղիք չունի:»

Արդէն իսկ վերոգրեալ հատւածը այդ գրքից ապացուցում է, որ առանց հաւաստի սկզբնաղբիւրի չի կարելի վստահել արտագրութիւնների՝ նոյնիսկ հեղինակաւոր անձանց կողմից:

Ըստ մեր ներկայացրած փաստաթղթի, որ պատկանում է հէնց Արզարեաններ տոհմի կայքէջին(3), Ն.Զուղայի Թատրոնը հիմնւել եւ սկսել է 1887թ. Փետր.9-ին եւ ոչ թէ՝ 1886-ին եւ այս թւականը համեմատելով Իրանի միւս հայաբնակ շրջանների սկզբնաւորման հերթական թւականների հետ, արդէն իսկ պէտք է կռահել, որ Ն.Զուղան ոչ թէ երրորդ տեղում է, այլ՝ զիջելով Ռաշտին, զբաղեցնում է 4-րդ տեղը(4), (Թեհրան, Թաւրիզ, Ռաշտ, Ն.Զուղա), ամենայնդէպս Ռաշտի հայ համայնքը մօտ լինելով թիֆ-


լիսի եւ Բաքւի մտաւորականութեանը եւ շփուելով նրանց հետ, պարզ է, որ զոնէ թատրոնի առումով պիտի առաջ անցնէր Ն.Զուղայից:

Համեմատելով Ռաշտի եւ Ն.Զուղայի Թատրոնի յայտարարութիւնը, հարց է ծագում թէ, ո՞վ է Բեգլար Աղայեանը, որ մեր համայնքին ծանօթ դէմք՝ Յովսէփ Միրզայեանի(5) հետ միասին, բնութագրական դերերով են հանդես եկել թէ Ռաշտի եւ թէ Ն.Զուղայի Թատրոնի սկզբնաւորման հրաշափայլ գործում: Հաւանաբար նրանք եղել են մտերիմներ եւ հասակակիցներ, 87 թւականին Յ.Միրզայեանը լինելով 19-տարեկան մի ուսեալ երիտասարդ եւ օժտւած բարձր կուլտուրական գիտակցութեամբ պէտք է ունենար իր խառնւածքի նման մի ընկեր, որ կարողանային դերակատար լինել այս սրբազան սերմնացանին:

Ցաւօք սրտի Բ.Աղայեանի կեանքի մասին տւեալները շատ աղօտ են եւ միայն գիտենք, որ նա եղել է դարաբաղցի եւ բնակւել է Թաւրիզում եւ զբաղւել լուսանկարչութեամբ(6), դա մեզ թոյլ է տալիս ենթադրել որ նա ունենալով գեղարւեստական բարձր ճաշակ, մեծ հաւանականութեամբ պէտք է լինի նոյն ինքը, թատերասէր Բեգլար Աղայեանը:

Իսկ Ն.Զուղայի առաջին ներկայացման դէմքերից ովքեր են, Աստուածատուրը եւ Յարութիւնը:

Համեմատելով Ն.Զուղայի 1887 եւ 88 թւականի յայտարար-



րութիւնները, որոնք իրարից տարբերուում են միայն մէկ տարով, մեծ հաւանականութեամբ պէտք է ասել, Աստուծատուրը նոյն ինքը՝ Աստուծատուր Սարգսեանն է, եւ Յարութիւնը՝ Յարութիւն Տէր Կարապետը, նամանակահատուկ, որ նրանք երկու պիւսներուում էլ ունեցել են դերեր:

Իսկ վերջում անդրադառնանք թոյլ տւած կարելոր մի վրիպումի: Ռաշտի փաստաթուղթը հայերէնից պարսկերէն թարգմանելու ժամանակ, որը տեղ է գտել Ֆարամարզ Թալեբիի, «Գիւլանի թատրոնի պատմութիւնը» գրքում, որոշ դերակատարների ազգանունները սխալ են թարգմանել եւ դրա պատճառը եղել է ձեռագրի դժար ընթեռնելու խնդիրը,

դրանք են՝ Սաֆրագեանց եւ ոչ թէ Սաֆարեան, Բեգլար Աղայեանց եւ ոչ թէ Բեգլարա Ազայեան, Տէր Յակովբեանց եւ ոչ թէ Տէր Յախբեան, Ջառափեանց եւ ոչ թէ Ջառափքեան, եւ վերջապէս Յաղլաթեանց եւ ոչ թէ Յաղվերդեան:

Յուսանք ինչքան շուտ կը վերանայի վերոյիշեալ գրքի սխալները եւ մեր պարսիկ թատերական բանասէրները կը փրկւեն այս մոլորութիւնից:

Փառք ու պատիւ Ն.Ջուղայի հասարակութեանը, որ շուտով կը տօնի իր ազգային թատրոնի փառահեղ անցեալի 125-ամեակը (1887-2012):

Ծանօթագրութիւն

- 1-Ն.Ջուղայի Թատրոնը, 1995 Յ.Գ. Սիւնասեան
- 2-Ռեշտու Թատրոնական հաշիւն վերաբերեալ ծանօթութիւն. Սովսեւ Անանեան
- 3-Արգարեանց արխիւ www.abcarians.com.
- 4-Ն.Ջուղայի Թատրոնը, էջ15
- 5.Յովսէփ Զ.Սիրոյեանց (1868-1935)-գրականագետ, թարգմանիչ, Իրանի խորհրդարանի առաջին հայ պատգամաւոր:
- 6-«Յոյս» երկշաբաթաթերթ, Դ տարի, թիւ 89, 2010, էջ14

Հոկտ.20 2011թ

«ՉԱՉԻ ԱՐՔԱՅ»՝ ՎԻՉԷՆ ՏԵՐՏԵՐԵԱՆ Վիզենի մահուան 8-րդ տարելիցի առթիվ

Խաչիկ Խաչեր


2003 թվականի Հոկտեմբերի 26-ին, հեռաւոր Ամերիկայի անկիւններից մէկում, մեզմից յաւերժաբար հեռացաւ իրանահայ երգիչ, իրանական մոդեռն երաժշտութեան (Փափ կուզես ասա՛, Ջազ կուզես ասա՛...) հիմնադիր, «Ջազի Արքայ»-ի տիտղոսին արժանացած, Վիզեն Տերտերեանը:

Հետաքրքիր զուգահիստիւթիւն է, որ հայ ժողովրդի երկու մեծ զաւակներ, յայտնի երգիչներ՝ Յովհաննէս Բաղալեանն ու իրանական երաժշտութեան նորարար՝ Վիզեն Տերտերեանը երկուսն էլ համադանցի են:

Ելնելով այն իրականութիւնից, որ Վիզենի եղբայր՝ Կարօն Իրանի ամենամեծ բանաստեղծների եւ գրողների շարքին է դասուում, եւ քոյրերն էլ փորձել են երգել, պէտք է հաւատալ, որ նրանց ընտանիքը մշակութային հիմք է ունեցել:

Երիտասարդ Վիզենը միլիոնաւոր իրանցի երիտասարդների նման, որպէս գծագրիչ մտնում է նաւթի ճարտարութեան մէջ, բայց որովհետեւ նրա ծիրքն ու կոչումը այլ էր, շուտով գտնում է իր ճամփան եւ հռչակի ու համբաւի հասնում կարճ ժամանակում, փայլելով Իրանի աստղալի երկնքում, որպէս սակաւաթիւ գերաստղերից մէկը:

Մեր թաղը սկզբում կոչւում էր Իւսեֆֆաբադ, բայց երբ ասֆֆալտապատեցին նրա գլխաւոր փողոցը, այն կոչելով՝ «Նադիր Շահ»,



մեր թաղն էլ մէկ գիշերւայ մէջ անւանափոխեց ու կոչւեց՝ «Նադիր Շահ»:

Թաղը կեանքի էր կոչւել երեւի 1951 թվականից սկսեալ: Գիտէք էլ, Իրանի զանազան շրջաններից Թեհրան տեղափոխուող ընտանիքները աշխատում էին հաւաքւել իրար շուրջ: Նրանցից մի խումբը եկաւ ու բնակութիւն հաստատեց այստեղ: Ինչպէս լինում է միշտ, որովհետեւ արդէն եկեղեցին կար, ուրեմն պէտք էր դպրոց բացել: Բացեցին: «Արաքս» դպրոցը, որն աշխատում է մինչեւ այսօր:

Ահա այդ դպրոցի ծնողական խորհուրդն էլ աշխոյժ աշխատանք էր տանում, դպրոցին, գլխաւորապէս միւթական տեսակետից նեցուկ կանգնելու համար: Ծնողական խորհուրդը, որի գլխաւոր դերակատարները կանայք էին, տարին մի երկու - երեք ան-

գամ ուրախ երեկոներ էր կազմակերպում, որտեղ, թէ՛ իսկական ուրախութիւն էր լինում, հարազատ ու ջերմ, բաեկամական մթնոլորտում, եւ թէ՛ ինչ-որ գումար էր հաւաքւում դպրոցի համար:

Այդ ուրախ երեկոներից ամենակարեւորները կազմակերպւում էին Վիզենի մասնակցութեամբ: Վիզենը ամենայն սիրով ընդունում էր հրաւերն ու զալիս էր, իր հետ բերելով իրեն նւագակցող լրիւ խումբն ամբողջ յայտնի երաժիշտներով: Մէկ ամբողջ գիշեր մեր թաղում ուրախութիւն էր լինում:

Մեծ ու պզտիկ սրտի տակից հրճւում եւ ուրախանում էին: Շատերը, որ տոմս չէին ձեռք բերում խնջոյքին մասնակցելու, կազմում էին դրսում եւ ունկնդրում Վիզենի հոգեմայ երգերը:

Վիզենը դրանով չէր բաւարարւում: Վերջում երբ զալիս էր հրաժեշտի պահը, նա միշտ էլ առատածեռն նւիրատութիւն էր անում եւ ասում.

-Ես զրկանքի մէջ եմ մեծացել եւ գիտեմ, թէ ինչ է զրկանքը:

Յիշում եմ, թաղում մի խանութ կար, որի տէրը՝ Յովհաննէսը, հեծանիւներ էր վարձու տալիս: Այն օրերին, դեռ կացութիւնն այնպէս չէր, որ ամէն մարդ կարողանար իր երեխայի համար մի հեծանիւ գնել: Յովհաննէսը մի քանի նոր հեծանիւներ էր գնել եւ շարել իրար կողքի: Իմ տարիքի 12-13 տարեկան տղաները (դեռ աղջիկ-

ների մօտ հեծանիւ նստելը մողա չէր դարձել), փափագով նայում էին այդ հեծանիւներին եւ ստացած շայիները կուտակում մի կէս ժամ այդ հեծանիւներից որեւէ մէկը, վարձելու համար:

Մի օր էլ այնպէս դասաւորւեց, որ երբ ես անցնում էի Յովհաննէսի հեծանիւների խանութի առջեւից, նկատեցի, որ մի քանի ինձնից մեծ տղաներ, Վիգենի ամենավերջին երգն են երգել փորձում: Սօտեցայ, ականջ դրեցի: Մէկ օր առաջ, ես այդ երգը ռադիոյից ցրելիս, գրի էի առել եւ մի քանի անգամ էլ փորձել էի մայրիկիս համար երգել այն: Ախր Մայրիկս էլ շատ էր սիրում Վիգենի երգերը եւ որպէս ծնողական խորհրդի հիմնական անդամ, միշտ էլ առաջիններից մէկն էր, որ առաջարկում էր հրաւիրել Վիգենին: Երգը կոչւում էր «Գարնան Ձեփիւռ» (Նասիմէ

Բահարի) : Հիմա էլ չեմ մոռանում այն բերկրանքն ու ցնծութիւնը, որ պատեց, մեր թաղի հեծանավար ու հեծանատէր Յովհաննէսին, երբ ես բառ առ բառ, մինչեւ վերջ երգեցի «Գարնան Ձեփիւռ»-ը:

Իսկոյն էլ ձեռքս բռնեց, տարաւ դէպի նորութիւնից փայլվող հեծանիւներն ու ասաց.

-Քշի՛ր, որը կուզես:

Երբ ես յետ եկայ, նա արդէն սկսել էր գրի առնել այն եւ խնդրեց, որ օգնեմ իրեն այն լրացնելու:

Եթէ չեմ սխալւում 1961 կամ 62-ին, երբ Յովհաննէս Բաղալեանը Իրան էր եկել, ուսիւթեամբ լսեցինք, որ Վիգենը նրան իրենց տուն է հաւիրել եւ միասին երգել են: Յետոյ ծայնապնակի վրայ ունկնդրեցինք Վիգենի երգերից մի քանիսը Բաղալեանի կատարմամբ:

Յետոյ այնպէս պատահեց, որ Վիգենին արգելեցին երգել թագաւորական ռադիոյից: Ախր ամէն ինչ տնօրինում էր պալատական «Աւագանու» հրահանգներով: Լսեցինք, որ Վիգենը, նրանց առջեւ չի սիրում «խոնարհել»:

Յետոյ էլ Վիգենը հեռացաւ Իրանից:

Իմ սերունդը անմոռանալի յիշողութիւններ ու յիշատակներ ունի Վիգենից:

Նա երբեք չի մոռանայ նրան: Եւ շատ է ցաւում եւ ափսոսում, որ իրանահայութիւնը, այդպէս երախտամոռ վերաբերմունք ցուցաբերեց նրա հանդէպ:

Ահա նրա «խաչքարը» օտարութեան մէջ:

Մէկ բառ հայերէն չկայ նրա վրայ:

.... մեզ:



ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳՉՈՒՅԻ ԻՒԵՏԱ ԵՂԻԳԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Քաթրին Եաղուբի

-Նախ խնդրում եմ պատմել ձեր եւ ձեր ընտանիքի մասին:

-Ես ծնւել եմ 1981 թւականին, Երեւանում, ամուսնացած եմ եւ 4 տարեկան մի աղջիկ ունեմ՝ Անգելիտա անունով: Ունեմ մի քոյր, որը ապրում է Ուկրաինայում, իսկ հայրս ու մայրս Ամերիկայում եմ: Ընտանիքիս մէջ ես ու հայրս դերասան ենք, իսկ մայրս՝ երբեմն գրում է թատերական փոքր սցենարներ:

- Իսկ ձեր սկզբնական զբաղմունքը երգն է եղել թե՞ դերասանութիւնը եւ ի՞նչ տարիքից էք սկսել երգել:

-Որպէս երգչուհի աւելի ուշ եմ սկսել աշխատել, բայց որպէս դերասան առաջին քայլս եղել է 5 տարեկանում, երբ Երեւանում փոքրիկ ֆիլմեր էին նկարահանում ու ես խաղացի թոռնիկի դերում, Յենրիկ Ալլահվերդեանի հետ՝ 10 ռուբլի աշխատավարձով: Իհարկէ լաւ դերասանը պէտք է իմանայ թէ լաւ երգել, թէ լաւ պարել, ու ես այդ ամէնն անց էմ կացրել, բայց որ պիտի խորանայի այս բիզնեսի մէջ՝ չգիտէի, ու դա շատ պատահաբար եղաւ:

-Մենք ձեզ ճանաչում ենք որպէս Ջիտա, «Վերվարածների ընտանիքի» մէջ, ի՞նչ կատեք այդ սերիալից: Ի՞նչ հետաքրքիր յուշ ունեք դրանից:

-Ես «Շանթ» հեռուստաընկերութիւնից հրաւեր ստացայ ու մասնակցեցի այդ աշխատանքին: Երեք տարի մենք ապրեցինք այդ ֆիլմով, անգամ օր է եղել, որ գիշերը տուն չենք գնացել ու մնացել ենք աշխատանքի: Հրաշալի աշ-



Իւետա Եղիգարեանը իր դստեր՝ Անգելիտայի հետ

խատանք էր այդ խումբի հետ, բոլորը ընկերասէր, զիջող, իրար հասկացող, ոնց որ մի ընտանիք լինէինք: Սկզբում միայն հիւանդանոցում ու միլիցիայում էինք նկարահանում, ու անգամ չգիտէինք թէ ինչքան հեռուստադիտող է մեզ հետետում, բայց երբ մեկնեցի Ամերիկա ծնողներիս մօտ, այնտեղ իմացայ թէ ինչքան ճանաչւած ենք հայ ընտանիքների մէջ: Ամբողջ ֆիլմի ընթացքն ինձ համար հրաշալի յիշողութիւն է, բայց ամենահետաքրքիրն այն մասն է թէ ես արդէն գնում եմ հիւանդանոց երեխայ ունենալու, իսկ յաջորդ օրն իրապէս մեկնեցի հիւանդանոց ու աղջիկս ծնւեց, ֆիլմի համար էլ հենց այդպէս գունատ ու թուլիկ դեմքով նկարահանեցին:

-Ի՞նչ դժարութիւնների միջով էք անցել, մինչեւ կարողացել էք ճանաչւած կերպար դառնալ:

